



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

# ՀԳՄԾ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

**Գործունեության լրատվաթերթիկ 2009թ. հուլիս-սեպտեմբեր 2-րդ մաս  
4-րդ թողարկում**

## Հակակոռուպցիոն համաժողով և Կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև կապի վերաբերյալ զեկույց

### ԱՅՍ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵՋ

1. Հակակոռուպցիոն համաժողով և Կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև կապի վերաբերյալ զեկույց
2. ՀԳՄԾ-ն վերապատրաստում է հարկային տեսուչներին
2. ՀԳՄԾ-ն դրամաշնորհներ է տրամադրում դպրոցներում, բժշկական հաստատություններում և հավաստագրման մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարելու համար
2. 2009 թվականի Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունները ընթացքի մեջ են
3. ՇՊԱԿ-ները քննարկում են պետական մարմինների հետ համագործակցության մեխանիզմները
3. ՀԳՄԾ դրամաշնորհառու «Բանաձև» ընկերությունը հետաքրքրվում է Հակակոռուպցիոն ծրագրեր
3. Հրապարակվում է 2008թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունը
4. Սկսվել է ՀԳՄԾ գործունեության երրորդ տարին

Կոռուպցիան խախտում է մարդու իրավունքներն ուղղակիորեն և անուղղակիորեն, սակայն կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև կապը բավարար արդյունավետությամբ չի արտացոլվում կոռուպցիայի դեմ պայքարում: Նշված հարցում ակտիվություն մտցնելու նպատակով ՀԳՄԾ-ն, որպես իր 4-րդ հակակոռուպցիոն համաժողովի թեմա, ընտրել է կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև կապը: Համաժողովը կազմակերպվել է Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհրդի (ՄԻՔՄԻ) հետ համատեղ. վերջինս միջազգային հասարակական կազմակերպություն է, որը մասնագիտացած է մարդու իրավունքների խորացված հետազոտություններում: Համաժողովին մասնակցել են պետական կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հանրության և մամուլի ավելի քան 60 ներկայացուցիչներ:

Համաժողովին նախորդած մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, ՄԻՔՄԻ Գործադիր տնօրեն Ռոբերտ Արչերը և ՀԳՄԾ ղեկավար Ֆրանսուա Վեզինան հայտարարել են «Կոռուպցիան և մարդու իրավունքները»:

*կապի հաստատումը»* ՄԻՔՄԻ զեկույցի հայերեն թարգմանության թողարկման մասին: Ձեկույցն ի սկզբանե հրատարակվել է 2009թ. սկզբին անգլերեն լեզվով, և դրա առաջին թարգմանությունը եղել է հայերեն լեզվով: Ձեկույցի հայերեն տարբերակը հրատարակվել է ՄԻՔՄԻ-ի և ՀԳՄԾ-ի համատեղ ջանքերով: Ձեկույցում խոսվում է այն մասին, թե ինչպես է ողջ աշխարհով մեկ կոռուպցիան ներգործում մարդու իրավունքների վրա: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը շարադրել է ՄԻՔՄԻ զեկույցի առաջաբանը և իր ողջույնի խոսքն է հղել համաժողովի ժամանակ: Ձեկույցի օրինակները բաժանվել են համաժողովի ժամանակ, ինչպես նաև տրամադրվել պետական պաշտոնյաներին:

Միջոցառումը բաղկացած է եղել չորս միասից՝ **Երբ է կոռուպցիան խախտում մարդու իրավունքները, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը և կոռուպցիայի դեմ պայքարը, Կոռուպցիոն գործողությունների և առանձին մարդու իրավունքների միջև կապը, Կոռուպցիոն դեպքերը հետաքննող անձանց իրավունքների պաշտպանություն և Հակակոռուպցիոն գործողությունների չարաշահումների կանխարգելում:** Համաժողովի ժամանակ ընդգծվել է, թե ինչպես են կոռուպցիոն գործողությունները խախտում մարդու իրավունքները, ինչպես նաև քննարկվել են մարդու իրավունքների սկզբունքները հակակոռուպցիոն նախաձեռնություններում կիրառելու գործնական հիմքերը:

«Մարդու իրավունքների գործոնի և հակակոռուպցիոն նախաձեռնությունների միջև կապի կարևորությունը անհնար է գերազնահատել», ասել է ԱՄՆ ՄՁԳ հայաստանյան առաքելության տնօրեն դկտ. Ջաքինդեր Հիման: «Այս համաժողովը և զեկույցի հայերեն լեզվով թողարկումը երկու նշանակալի ձեռքբերումներ են՝ մշված կարևորագույն խնդիրները հայ հասարակության ուշադրությանը ներկայացնելու առումով»:



ՀԳՄԾ ղեկավար Ֆրանսուա Վեզինան, Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, և ՄԻՔՄԻ տնօրեն Ռոբերտ Արչերը /աջից ծախ/

<p><b>ԱՄՆ ՄՁԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր (ՀԳՄԾ)</b></p> <p>Տեղյան 105/1, 804 սենյակ ՀՀ, ք. Երևան, 0009</p>	<p>Հեռ.՝ +374 10 514835 Ֆաքս՝ +374 10 514836 Էլ. փոստ՝ info@maac.am www.maac.am</p>	 <p>Նորթ Ֆեյրֆաքս 1199, երրորդ հարկ ԱՄՆ, 22314, Ալեքսանդրիա Հեռ.՝ 703 920 1234 Ֆաքս՝ 703 920 5750 Էլ. փոստ՝ info@casals.com www.casals.com</p>
<p>Սույն լրատվաթերթիկը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով տրամադրվող օժանդակությամբ: Սույն լրատվաթերթիկի բովանդակության համար միմիայն պատասխանատու է Կասալս Ենդ Ասոցիեյթս Ինք. ընկերությունը, և այն կարող է չարտացոլել ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:</p>		

ՀԳՄՕ-ն վերապատրաստում է հարկային տեսուչներին



ՀԳՄՕ խորհրդատու Վան Կարլտոնը վերապատրաստում է անցկացնում ՀԳ-ների համար

Սկսած 2009թ. ապրիլից՝ ՀԳՄՕ-ն և ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) համատեղ աշխատել են ՀՀ հարկային տեսուչների համար Կոռուպցիայի հայտնաբերման և հաղորդման վերաբերյալ ձեռնարկ մշակելու և համապատասխան վերապատրաստում անցկացնելու ուղղությամբ: Տեխնիկական աջակցության միջոցով ՀԳՄՕ-ն օգնում է ՊԵԿ-ին կատարելու Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները՝ միաժամանակ հզորացնելով հարկային համակարգը, ընդլայնելով աշխատողների գիտելիքները և բարձրացնելով նրանց գործունեության արդյունավետությունը:

Նախորդ եռամսյակի ընթացքում ՀԳՄՕ միջազգային խորհրդատու Վան Կարլտոնը խորհրդատվություն է ներկայացրել հարկային տեսուչներին և այլ շահառուներին՝ ՊԵԿ-ի հարկային ծառայողների համար կոռուպցիայի հայտնաբերման ձեռնարկ մշակելու նպատակով: ՀՀ ՊԵԿ-ի կարիքներին համապատասխան ուղեցույց մշակելու համար խորհրդատուն որպես օրինակ վերցրել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Կաշառակերության մասին իրազեկության ձեռնարկը»: 2009թ. հուլիսի 10-ին ՊԵԿ-ը պաշտոնապես ընդունել է ձեռնարկը և այդ մասին հայտարարել մամուլ առուլիսի ժամանակ: Ներկայումս ձեռնարկը տեղադրված է ՊԵԿ-ի ինտերնետային կայքում՝ [www.taxservice.am](http://www.taxservice.am), Հարկային բարեփոխումների բաժնում: Հուլիսին ՀԳՄՕ-ն շարունակել է օժանդակել ՊԵԿ-ին՝ հարկային ծառայողների

համար վերապատրաստման ծրագիր մշակելու և համապատասխան վերապատրաստում տրամադրելու միջոցով: Վերապատրաստման ծրագրի շրջանակում, ձեռնարկի հիման վրա հարկային ծառայողները վերապատրաստվել են՝ կոռուպցիոն դեպքերի հայտնաբերման և այլ մասին համալսարանական իրավապահ մարմիններին հաղորդման վերաբերյալ: Ստանալով ՊԵԿ-ի ինստիտուցիոնալ համաձայնությունը՝ հուլիսի 15-19 և 21-ին Կարլտոնը տրամադրել է 5 վերապատրաստում 112 հարկային տեսուչների համար: Վերապատրաստման դասընթացների ընթացքում մասնակիցները քննարկել են կոռուպցիոն դեպքերի հայտնաբերման հնարքները և ներկայացրել են իրենց մեկնաբանությունները, կարծիքները և խորհուրդները: Հուլիսի 10, 13 և 14-ին Կարլտոնը նաև տրամադրել է եռօրյա «վերապատրաստողների վերապատրաստում»: Նշված խորացված դասընթացների ժամանակ վեց ավագ հարկային ծառայողների փոխանցվել են այնպիսի հմտություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի վերապատրաստել այլ ծառայողներին՝ կոռուպցիայի հայտնաբերման վերաբերյալ: Հուլիսի ամսից վերոնշյալ վեց ծառայողները Հայաստանում վերապատրաստել են ևս 300 հարկային տեսուչների՝ վերապատրաստված հարկային ծառայողների ընդհանուր թիվը հասցնելով 418-ի: Վերապատրաստման դասընթացների ավարտից հետո Կարլտոնը ՊԵԿ-ին ներկայացրել է առաջարկություններ՝ կեղծիքի և կոռուպցիայի դեպքերը պատշաճ ուղարկելու համար: Օրինակ, վերապատրաստումը լիարժեք իրականացնելու համար Կարլտոնն առաջարկել է ՊԵԿ-ին ստեղծել կեղծիքի դեպքերի ուղարկման պաշտոնական ծրագիր: Կոռուպցիայի հայտնաբերման արդյունավետության նպատակով՝ Կարլտոնը նաև առաջարկել է բարեփոխել ՊԵԿ-ի կազմակերպական կառուցվածքը և հարկատուների ստուգման համար սահմանել պաշտոնական օբյեկտիվ չափորոշիչներ: ՀԳՄՕ խորհրդատու Կարլտոնը նաև վերապատրաստում է անցկացրել 22 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

ՀԳՄՕ-ն դրամաշնորհներ է տրամադրում դպրոցներում, բժշկական հաստատություններում և հավաստագրման մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարելու համար



Հասարակական երկխոսության և զարգացման կենտրոնի տնօրեն Լիլիթ Բեյեյանը և ՀԳՄՕ ղեկավար Ֆրանուա Վեզրանը

Օգոստոսի 24-ին ՀԳՄՕ-ն տրամադրել է երեք դրամաշնորհ՝ դպրոցներում, բժշկական հաստատություններում և հավաստագրման մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարելու համար:

Հակակոռուպցիոն պայքարում երեխաներին ներգրավելու նպատակով ՀԳՄՕ-ն դրամաշնորհ է տրամադրել «Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն» ՀԿ-ին՝ աշակերտների պատրաստած հակակոռուպցիոն թեմայով ժապավենների և լուսանկարների ցուցահանդես կազմակերպելու համար: «Ստվեր» կոչվող ցուցահանդեսի նպատակն է ստեղծել ֆորում, որտեղ երեխաներն իրենք կքննարկեն ազնվության, արդարության և արդար ավարելակերպի մասին գաղափարներ: Ցուցահանդեսը տեղի կունենա նոյեմբերին

Հայաստանի հիվանդանոցներում կոռուպցիայի դեմ պայքարելու համար ՀԳՄՕ-ն դրամաշնորհ է տրամադրել

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ին, որը հանդիսանում է ՀԳՄՕ-ի կազմակերպած ՀԿ Տոնավաճառի հաղթողներից մեկը: ՀԿ Տոնավաճառը մեկօրյա միջոցառում է, որտեղ հասարակական կազմակերպությունները հավաքվել են որպես վաճառողներ՝ խթանելու իրենց ծրագրերը և գաղափարները տոնավաճառի այցելուների և ժյուրիի անդամների առջ, ովքեր քվեարկության միջոցով որոշել են, թե որ ծրագրերը պետք է ստանան ֆինանսավորում: «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն հակակոռուպցիոն մոնիտորինգ կանցկացնի Արմավիրի մարզի չորս ամբուլատոր բժշկական հաստատություններում: Ծրագրով նախատեսվում է նաև մարզի գյուղական և քաղաքային համայնքներում իրականացնել առողջական իրավունքների իրազեկման քարոզարշավ:

Կոռուպցիայի դեմ պայքարը հավաստագրման մարմիններում խթանելու համար ՀԳՄՕ-ն դրամաշնորհ է տրամադրել «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ին: Ծրագրով նախատեսվում է մեծացնել թափանցիկությունը հավաստագրման մարմիններում և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Ծրագրի շրջանակում ՀԿ-ն նաև կաշխատի Որակի պետական տեսչության հետ՝ Հայաստանում ոչ պարենային ապրանքների ներմուծման, հարկման և վաճառքի մոնիտորինգի ընթացակարգը կարգավորելու համար: Ծրագիրը կտևի ինը ամիս:

2009 թվականի Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություններն ընթացքի մեջ են

Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության համար կարևոր նախապայման է գնահատել, թե ինչպես են քաղաքացիներն ընկալում կոռուպցիան, դրա հետևանքները և պայքարի ձևերը: ՀԳՄՕ-ն կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունների միջոցով ստանում է տեղեկատվություն կոռուպցիայի հանդեպ ընդհանուր վերաբերմունքի մասին, ներառյալ տոկոսային տվյալներ կոռուպցիայի ընդունման, կոռուպցիայի զոհերի և Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների շուրջ հանրային իրազեկության մասին: Հայաստանի բնակչության շրջանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն առաջին անգամ իրականացվել է 2008 թվականին:

Հայաստանի կոռուպցիայի ընկալման մասին հնարավորինս ճշգրիտ տվյալներ ստանալու համար ՀԳՄՕ-ն այս տարի, բացի տնային տնտեսություններից, հանրային կարծիքի հետազոտություն է անցկացնելու նաև գործարարների և պետական պաշտոնյաների շրջանում: Հետազոտությունների արդյունքները կհամադրվեն հետևելով Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից ինստիտուցիոնալ կոռուպցիայի աղբյուրներն ախտորոշելու և ինստիտուցիոնալ գործառնությունների խաթարման չափը գնահատելու համար մշակված տրիանգուլյացիայի ընթացակարգին: Տրիանգուլյացիան չափում է կոռուպցիայի տնտեսական և սոցիալական զինը, օգնում է սահմանել առաջնահերթ բարեփոխումները և ձևավորել երկխոսություն՝ խթանելով կոռուպցիայի նվազեցմանն ուղղված բարեփոխումների իրականացմանը:

ՀԳՄՕ-ն պայմանագիր է կնքել Եվրոասիա համագործակցության հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոններ/Հայաստան ծրագրի հետ՝ վերոհիշյալ հետազոտությունն անցկացնելու համար: Դաշտային աշխատանքը տեղի կունենա հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին, և ՀԳՄՕ-ն ակնկալում է հետազոտության արդյունքները հրապարակել դեկտեմբերին:

**ՇՊԱԿ-ները քննարկում են պետական մարմինների հետ համագործակցության մեխանիզմները**

Խորհրդակցությունների, կլոր սեղանների, աշխատաժողովների և խմբային քննարկումների ժամանակ Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) աշխատողները սերտորեն համագործակցել են պետական կառույցների հետ կոռուպցիայի դեմ պայքարելու գործում: Սեպտեմբերի 26-ին ՇՊԱԿ-ների ներկայացուցիչները մասնակցել են մի աշխատաժողովի, որի թեման եղել է մարդու իրավունքների և կոռուպցիայի միջև կապը: Աշխատաժողովի նպատակն է եղել հետամուտ լինել ՀԳՄԾ չորրորդ հակակոռուպցիոն համաժողովի ժամանակ քննարկված ռազմավարությունների կիրառմանը: Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհրդի (ԺՄՆ) փորձագետ Խուլիո Բասիո Տեռասինոն հանդես է եկել ելույթով, որից հետո Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի աշխատակիցները վարել են խմբային քննարկումներ: Աշխատաժողովի ընթացքում ՇՊԱԿ-ների և ՄԻՊ-ի աշխատակիցները ներկայացրել են կոնկրետ գործեր, իսկ խմբերը վերլուծել են կոռուպցիայի և մարդու իրավունքների տարրերի առկայությունն այդ գործերում: Խմբային քննարկումները վարող ՄԻՊ-ի աշխատակիցները ներկայանրին ներկայացրել են խմբերի ստացած արդյունքները: Ավելի ուշ, առավել մանրամասն քննարկումներ են ծավալվել ՄԻՊ-ի և ՇՊԱԿ-ների միջև համագործակցության առանձնահատուկ ոլորտների վերաբերյալ:



Պարոն Տեռասինոն ելույթ է ունենում աշխատաժողովի մասնակիցների առջև

Սեպտեմբերի 27-28-ը ՀԳՄԾ-ն Աղվերանում անցկացրել է ՇՊԱԿ-ների չորրորդ եռամսյակային համաժողովը, որի ժամանակ բոլոր տասնմեկ ՇՊԱԿ-ների ներկայացուցիչները փոխանակել են իրենց փորձը՝ կապված ՇՊԱԿ-ների արդյունավետության բարձրացման հետ: Մասնակիցները նաև հատկորոշել են կոնկրետ միջոցառումներ՝ կարևորագույն հակակոռուպցիոն բարեփոխումների ընդունման գործընթացին խթանելու համար:

Համաժողովի ընթացքում ՇՊԱԿ-ների աշխատակիցներն անցկացրել են կլոր սեղանի հատուկ քննարկումներ Գլխավոր դատախազության բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ներառյալ Գլխավոր դատախազի տեղակալը, Կազմակերպված հանցագործության և կոռուպցիայի դեմ պայքարի վարչության պետը, մարզային դատախազները և Հանրային կապերի բաժնի պետը: ՇՊԱԿ-ների աշխատակիցները ներկայացրել են առաջարկություններ՝ ուղղված մշակված գրասենյակների հետ փոխհարաբերությունների ամրապնդմանը: Կլոր սեղանի քննարկումների միջոցով ՇՊԱԿ-ները առաջին քայլն են կատարել Գլխավոր դատախազության և դրա մարզային բաժանմունքների հետ համագործակցության կոնկրետ մեխանիզմներ մշակելու ուղղությամբ:

**ՀԳՄԾ դրամաշնորհառու «Բանաձև» ընկերությունը հեռարձակում է Հակակոռուպցիոն ծրագրեր**

ՀԳՄԾ գերակայություններից մեկն է՝ փոխել երիտասարդների մտածելակերպը նախքան կոռուպցիան լիովին կարմատավորվի նրանց ապրելակերպում: Երիտասարդներին կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավելու նպատակով ՀԳՄԾ-ն «Բանաձև» ընկերությանը տրամադրել է դրամաշնորհ՝ երիտասարդներին կոռուպցիայի մասին աշխույժ և հետաքրքիր ձևով իրազեկելու համար: Այս աշնանը մեկնարկել է «Բանաձև» ընկերության «Ականատես» իրական պատմություններ» ծրագիրը, որի ընթացքում հայ երիտասարդները քննարկում են կոռուպցիայի խնդիրը և նկարահանում, թե ինչպես է այն ազդում իրենց կյանքի վրա:

Նկարահանման տարրական նրբությունները: Երբ սիրողական նկարահանողները հավաքել են նյութեր, Բանաձևը օգնել է նրանց խմբագրել և ամբողջացնել դրանք: Ժապավեններից յուրաքանչյուրը տևում է քսան րոպե:

Ծրագրերի շարքը մեկնարկել է Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ (Հ1) աշնան սկզբին՝ 2009թ. սեպտեմբերի 26-ին: Առաջին երկու ծրագրերն այնքան բարձր ժողովրդականություն են վայելել, որ Բանաձևն արդեն մտածում է նախագիծը դարձնել մշտական: Ծրագիրը հեռարձակվում է Հ1 հեռուստաալիքով ամեն շաբաթ օր՝ ժամը 4:30-ին: Հաղորդումները հասանելի են նաև [http://www.youtube.com/results?search\\_query=Akanates+Banadz ev&search\\_type= հասցեով](http://www.youtube.com/results?search_query=Akanates+Banadz ev&search_type= հասցեով):

«Բանաձև»-ը կյանքի տարբեր արահետներից եկող տասնհինգ երիտասարդների տվել է տեսախցիկներ և սովորեցրել

**Հրապարակվում է 2008թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունը**

2008թ. աշնանն ավելի քան 1500 բնակիչներ մասնակցել են Հայաստանով մեկ անցկացված Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությանը, որը կազմակերպվել է ՀԳՄԾ-ի կողմից՝ «ԱՅ Ի ԷՍ»-ի և Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: 2008թ. անցկացված հետազոտությունն առաջինն էր Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ամենամյա հետազոտությունների շարքում: Մասնակիցները պատասխանել են հարցերին՝ կապված կոռուպցիայի երևույթի ընկալման, կոռուպցիային առնչվող անձնական փորձի հետ, որքանով են նրանք տուժել կոռուպցիայից, ինչպես նաև որքանով են իրազեկված Կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին:

Հետազոտության արդյունքները հնարավորինս շուտ հրապարակային դարձնելու նպատակով ՀԳՄԾ-ն 2009թ. ապրիլին դրամաշնորհ է տրամադրել ՀՌԿԿ հայաստանյան գրասենյակին: Արիլ-օգոստոս ամիսներին անցկացվել են մի շարք հանրային ներկայացումներ և կրթական միջոցառումներ, որոնց միջոցով ՀՌԿԿ-ն Հայաստանով մեկ խրախուսել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացմանը: Երևանում և Հանրապետության մարզերում տրամադրվել են ներկայացումներ՝ քաղաքացիական հասարակության անդամների, ուսանողների, գիտաշխատողների, պետական պաշտոնյաների և մասնուլի մասնակցությամբ:

2008թ. աշնանն ավելի քան 1500 բնակիչներ մասնակցել են Հայաստանով մեկ անցկացված Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությանը, որը կազմակերպվել է ՀԳՄԾ-ի կողմից՝ «Ա3 ԷՖ Ի ԷՍ»-ի և Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: 2008թ. անցկացված հետազոտությունն առաջինն էր Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ամենամյա հետազոտությունների շարքում: Մասնակիցները պատասխանել են հարցերին՝ կապված կոռուպցիայի երևույթի ընկալման, կոռուպցիային առնչվող անձնական փորձի հետ, որքանով են նրանք տուժել կոռուպցիայից, ինչպես նաև որքանով են իրազեկված Կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջամտությունների մասին:

Հետազոտության արդյունքները հնարավորինս շուտ հրատարակային դարձնելու նպատակով ՀԳՄԾ-ն 2009թ. ապրիլին դրամաշնորհ է տրամադրել ՀՌԿԿ հայաստանյան գրասենյակին: Ապրիլ-օգոստոս ամիսներին անցկացվել են մի շարք հանրային ներկայացումներ և կրթական միջոցառումներ, որոնց միջոցով ՀՌԿԿ-ն Հայաստանով մեկ խրախուսել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացմանը: Երևանում և Հանրապետության մարզերում տրամադրվել են ներկայացումներ՝ քաղաքացիական հասարակության անդամների, ուսանողների, գիտաշխատողների, պետական պաշտոնյաների և մամուլի մասնակցությամբ:

Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության զեկույցն ուղարկվել է ավելի քան 900 հասցեներով, ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, գիտաշխատողները, գրադարանները, համալսարանները, հետազոտական ընկերությունները, միջազգային հանրությունը, դոնոր կազմակերպությունները և մամուլը: Ձեկույցը նաև ուղարկվել է բազմաթիվ պետական կառույցներ և ՀՀ Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին: Ձեկույցի կապակցությամբ իրենց պատասխան արձագանքն են տրամադրել պետական կառույցները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, որը կարտացոլվի ՀԳՄԾ 2009թ. Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության մեջ:

### Սկսվել է ՀԳՄԾ գործունեության երրորդ տարին

Այս եռամսյակին մեկնարկում է ՀԳՄԾ-ի իրականացման երրորդ տարին: Նախորդ տարվա ընթացքում ՀԳՄԾ-ն սերտորեն աշխատել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, պետական կառույցների և հանրության հետ՝ Հայաստանում առկա կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ:

2008թ. աշնանը ՀԳՄԾ-ն բացել է Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ (ՇՊԱԿ) Երևանում և հանրապետության բոլոր մարզերի խոշորագույն քաղաքներում: Տասնմեկ ՇՊԱԿ-ները գործարկվում են տեղական ՀԿ-ների կողմից և Հայաստանի քաղաքացիներին տրամադրում են անվճար իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ կոռուպցիային առնչվող խնդիրների վերաբերյալ: Կենտրոնները նաև խրախուսում են բարեփոխումների իրականացմանը՝ առաջարկելով ՀՀ Կառավարությանը կատարել համակարգային փոփոխություններ:

Նախորդ տարվա ընթացքում ՀԳՄԾ-ն նաև կազմակերպել է մի քանի հակակոռուպցիոն համաժողովներ և հանրային ներկայացումներ: Համաժողովների ժամանակ արծարծվել են հետևյալ թեմաները՝ Հայաստանի միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունները, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը, պետական անվճար ծննդօգնության ծառայությունների մոնիտորինգի իրականացումը, Կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև կապը: ՀԳՄԾ-ն նաև Միջազգային հակակոռուպցիոն օրվա առթիվ հանրությանն է ներկայացրել ՀԳՄԾ-ի շրջանակում անցկացված Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի տարեկան հետազոտության արդյունքները: Բոլոր վերը նշված միջոցառումներին մասնակցել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, պետական կառույցների, գիտական աշխարհի, միջազգային հանրության և մամուլի ներկայացուցիչներ:

2009թ. ապրիլի 22-ին ՀԳՄԾ-ն կազմակերպել է իր բնությով առաջին ՀԿ Տոնավաճառը. մի բացառիկ մրցույթ, որի նպատակն է եղել խրախուսել տեղական ՀԿ-ներին ներգրավվելու կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացին: Այդ օրը ՀԿ-ները հավաքվել են՝ իրենց ծրագրերը և գաղափարները վաճառելու հանրությանը և ժյուրիի անդամներին, որոնց քվեարկության արդյունքում որոշվել է, թե որ ծրագրերը պետք է ստանան համապատասխան ֆինանսավորում: 24 մասնակից կազմակերպություններից Տոնավաճառի հաղթողներ են ճանաչվել ութը, և դրանցից վեցի հետ ՀԳՄԾ-ն սկսել է բանակցել դրամաշնորհային պայմանագրերի շուրջ: Հաղթած ծրագրերի շրջանակում, հակակոռուպցիոն պայքար կիրականացվի հիվանդանոցներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև մամուլի միջոցով կընդլայնվի հակակոռուպցիոն շարժման մասին հանրային իրազեկությունը:

Ընդհանուր առմամբ, ՀԳՄԾ-ն նախորդ տարվա ընթացքում հայաստանյան կազմակերպություններին տրամադրել է 23 դրամաշնորհ՝ տարբեր ոլորտներում առկա կոռուպցիայի դեմ պայքարելու համար, սկսած մաքսային ծառայություններից մինչև գյուղական համայնքների բյուջեները: ՀԳՄԾ-ն երրորդ տարում ևս կշարունակի օժանդակել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ Հայաստանում հակակոռուպցիոն պայքարը շարունակելու նպատակով:

«Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք-ը միջազգային կառավարման խորհրդատվության և հաղորդակցման հարցերում մասնագիտացած ընկերություն է, որն օգնում է պետական և մասնավոր ոլորտի պատվիրատուներին ստեղծելու և խթանելու գաղափարներ և փոփոխություններ տարբեր լեզվական և մշակութային համատեքստերում: «Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք. ընկերությունը հիմնականում կենտրոնանում է հետևյալ ոլորտների վրա՝ ժողովրդավարություն և պատշաճ կառավարում, առողջապահություն և սննդաարդյունաբերություն, էներգիայի արդյունավետություն և շրջակա միջավայր, արտագաղթ, քաղաքաշինություն, միջազգային հեռարձակում և հեռախոսակապեր: Հիմնադրման օրից՝ 1986 թվականից, «Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք. ընկերությունը աշխատել է ամբողջ Միացյալ Նահանգներով մեկ և աշխարհի ավելի քան 30 երկրներում:

